


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԲԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 80
» » վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան 3 անգամ 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախքը խմբագրութեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր

ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Վեց տարի շարունակ Բաղադական Ժո-
ղովի ատենապետութիւնը վարելէ ետք, Տիար
Բիէն Բօլատ — որ հակառակ այս եւրոպա-
կանաձեւ անունին հայ մըն է ծննդեամբ —
իր հրաժարականը կուտայ պատճառներուն
ամենէն բանաւորները մէջտեղ դնելով՝ հիւան-
դութիւն և ճամբորդութիւն :

Գահիրէի հայ գաղութին համար ասիկայ
այնքան կարեւոր évènement մըն է որ չէինք
կրնար ազգային լուրերու շարքին մէջ պարզ
և անցողակի յիշատակութեամբ մը բաւակա-
նանալ : Ապահովապէս ժողովուրդը և անոր
հետ մէկտեղ լրագրութիւնը հետաքրքրող պա-
րագան այդ պատուական քաղաքացիին անա-
կընկալ կերպով իր պաշտօնէն հրաժարիլը չէ,
նախ անոր համար որ Տիար Բիէն Բօլատ
թէեւ եզրապատի հայ ընկերութեան ամենէն
պատուաբեր անդամներէն է իր գիրքով կեն-
ցադադարութեամբ, սրտի ազնիւ յատկու-
թիւններով և բանիմաց ձիրքերով, սակայն
հակառակ իր այդքան առաւելութիւններուն
չէր կրցած և չէր ալ կրնար ըլլալ Գահիրէ-
ցիներուն idéal ատենապետ :

Եւ ինքը, թերեւս մենէ աւելի գիտակից
էր ասոր և ստեպ կը խոստովանէր իր gentlemanի
անկեղծութեան մէջ, թէ չէր կրցած իր ազ-
գին մատուցանել այն ծառայութիւնը զոր իր-
մէ սպասելու իրաւունքը ունենալ կը կարծէր
ժողովուրդը :

Բայց պէտք է խոստովանիլ թէ այդպի-
սի ամուլ ատենապետութիւն մը ըրած ըլլա-
լու յանցանքը իրը չէ բոլորովին :

Այդ ազնիւ քաղաքացիին հայութեան գո-
յութիւնը մոռնալու վրայ էր երբ օրին մէկը
մեր ընկերական սանդուղին ամենէն բարձր
աստիճանին վրայ գտնուող անձնաւորութիւն-
ներէն մէկը, յօնսրէս մը հրամայելէն ետքը,
յանձնարարեց իրեն ընդունիլ Բաղադական
Ժողովի ատենապետութեան պաշտօնը :

— J'ai confiance en vous, allez-y, ըսած էր
իրեն թաղականներուն այդ Մեկենասը : Եւ
Տիար Բ. Բօլատ, ինչպէս որ գիւրդին է երե-
ւակայել, ուրիշ բան չէ կրցած ընել բայց եթէ
համակերպիլ այդքան վերէն եկած հրամանի մը :

Կը պատմուի թէ — իրաւ է որ չէնք գի-
տեր ո՛ր աստիճան ճամբորդութիւն կայ այս
զրոյցին մէջ — այս վայրկեանիս հրաժարեալ

Բաղադական Ժողովի ատենապետը երբ այդ
կարեւոր պաշտօնին կոչուեցաւ՝ Պէտէրըրի ու-
ղեցոյցի մը շնորհիւ կրցաւ Պէն-Էլ-Մուրէնի ե-
կեղեցին համար, առաջին անգամ ատենա-
պետելու համար Բաղադական Ժողովին անդ-
րանիկ նիստին :

Ոչ բարեկամեցողութիւն, ոչ խելք և ոչ
ալ tact կը պակսէր այդ մարդուն, անքննա-
դատելի կերպով կատարելու համար այդ կա-
րեւորագոյն պաշտօնը : Բայց աւա՛ղ, հակա-
ռակ իրեն համար մեր ունեցած յարգանքին
և համակրութեան պէտք է խոստովանինք թէ
Տիար Բօլատ երբէք չէ ունեցած այդ պաշ-
տօնին կոչումը՝ հետեւաբար փոխանակ Ժո-
ղովը ինք վարելու՝ թող տուած է որ ժողո-
վականները վարեն զինքը :

Տարբեր կերպ չէր կրնար ըլլալ :

Ամեն բանէ առաջ Բաղադական Ժողովի
ատենապետ մը, ազգային կեանք մը ունե-
ցած ըլլալու է, մեր տոհմային և եկեղեցա-
կան պատմութիւնը անձանօթ ըլլալու չէ ի-
րեն, և հիմնովին տեղեակ ըլլալու է մեր
բարքերուն, սովորութեան և կարգ ու սար-
գին : Միմիայն անյարժ կալուածներու հասոյթ-
ները գանձելու մէջ չի կայանար Բաղադական
Ժողովի մը պաշտօնը : ատենցմէ աւելի կարեւոր
բաներ կան ինչպէս կրթական հարցեր, եկեղե-
ցական խնդիրներ, ամուսնական վէճեր և ազ-
գային արժանապատուութեան հետ մտնէն
առնչութիւն ունեցող գործեր որոնք իրենց
լուծումը և կարգադրութիւնը իրմէ կուպա-
սեն : Եւ ի՞նչպէս կուզէք որ օգտաշատ
պաշտօնավարութիւն մը ունենայ ատենա-
պետ մը որ, իր ապրելու եղանակով և պա-
րագաներու բերմամբ, հեռու մնացած ըլլա-
լով ազգային շրջանակներէ, ոչ իր լեզուին և
ոչ ալ եկեղեցիին վրայ որոշ գաղափար մը կըր-
ցած է կազմել : Ամեն բան նոր, տարօրինակ
և զարմանալի կը գտնէ ազգային միջոցաւ
մէջ և ուսերը թոթովելէ զատ ուրիշ բան չի
մնար իրեն ընել երբ կենսական խնդիր մը
կարգադրելու համար իրեն կը գրնէն կղերքը,
ազգային անհասանելի, ժողովները, իր admi-
nistreները վերջապէս :

Տիար Բօլատի, ուսեալ բարեկիրթ, մի-
ջեւ մատնելուն ծայրը պատուաւոր անձնա-
ւորութիւն մը ըլլալը գաղտնիք մը չէ և ոչ
մէկերեսու համար :

Իրեն առաքելի հայր, լուրջ և գործունե-
եայ վաճառական, ամեն տեղ սիրուած և յար-

գուած հայ մըն է որուն պէս քիչերկուն հոս-
Բայց այս ամենը բաւական չեն տալու համար
իրեն այն etoffe որմէ կը ձևուին Բաղադա-
կան Ժողովի ատենապետները ամեն հայա-
նակ կեդրոններու մէջ : Ամենակատարեալ և
անքննադատելի կերպով նա պիտի կրնար վա-
րել դրամատուն մը, վարչութիւն մը, մեծ
ձեռնարկ մը, նոյն իսկ ֆօքիտեմ մը — չի մոռ-
նա՞ր որ Տիար Բօլատ mondain մըն է, այս
բառին ընդարձակ իմաստով — Բայց թող ներ-
ուի մեզ ըսել թէ մեր փնտռած ատենապե-
տը չէ կրցած ըլլալ երբէք :

Բաղադական Ժողովի իր ընկերներուն
ամենագիտութեան վրայ կուրօքէն վստահ,
չատ անգամ պատահած է իրեն որոշումներ
տալ հակառակ իր խղճմանը, առած կըր-
թութեանը և իր ազնիւ զգացումներուն : Բայց
քանի որ անգամ մը մէջը գտնուած է, չէր
կրնար արգելիլ որ գործերը չի քուլին au petit
bonheur des intrigues :

Ատանկ միջավայրերու մէջ չէր ապրած,
ասանկ տխուր մեքենայութիւններու հոգեբա-
նութիւնը կարենալ ըմբռնելու համար :

Եւ երբ այսօր նա կը թոթովէ լուծը այդ
ծանր պաշտօնին, մենք առաջինը կուզենք ըլ-
լալ հրապարակաւ յայտնելու համար թէ
Տիար Բիէն Բօլատ իր երկար պաշտօնավա-
րութեան մէջ պարկեշտ մարդ մը ըլլալէ չէ
դադրած և իրեն հետ գործ ունեցողները
միշտ գոհ մնացած են իր անձնուէր զգա-
ցումներէն և հաճելի կենցաղագիտութենէն :

Եթէ ոչ գործունեայ և աշխուհաւոր ա-
տենապետի մը, բայց գոնէ բարի և ազնիւ
մարդու մը յիշատակը պիտի թողու մեր մէջ
Տիար Բօլատ, ինչ որ շատ հազուադէպ պա-
րագայ մըն է Պէն-Էլ-Մուրէնի տարեգրու-
թեանց մէջ :

* * *

Ո՛վ պիտի յաջորդէ իրեն .

That is the question !

Ահա ուր կսկսի այս հրաժարականին հե-
տաքրքրական և մի և նոյն ատեն շահեկան
կողմը, զոր պիտի բացատրենք մեր առաջի-
կայ մէկ յօդուածով : En attendant, մտեր-
մօրէն մեզ կիմացնեն թէ Եւստուֆ Աղիզ պէյի
անունը ամենէն շատ առաջ քուլածն է և ան-
հաւանական չէ որ քիչ օրէն Բաղադական Ժո-
ղովի գլուխը տեսնենք խառն գաղափարներ
ուր այդ յարգելի անգամը : Եւ եթէ երբէք
այս լուրը ստուգութիւն գտնէ — ինչ որ չըլ-

լայիք բան չէ— չափ զարմանալի պիտի ըլլայ. այսինքն թէ, ասկէջ վեց տարի ետքըն ալ au minimum, այս օրուանին ճիշտ յար և նմանը յօդուած մը գրելու հարկին մէջ պիտի գտնուինք նորէն :

Բնականաբար անունները փոխել չպիտի մոռնանք :

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլ 18 թուականով Պոլսէն առնուած լուրերու նայելով, Ատանայի խռովութիւններուն իբրեւ մասնակից ամբաստանուած Լոյտի ընկերութեան Մէրսինի գործակատարին դէմ եղած դատավարութիւնը դադարած է: Մօտերս իրատէի մը կը սպասուի որ պիտի արգիլէ միւս ամբաստանուածներուն դատավարութիւնը ուրիշ իրատէի մըն ալ որ պիտի ներէ Պոլսոյ գրեթէ ամեն հայ բանտարկեալներուն :

—Թայլոզ կիմացնէ թէ Սուլթանին մէկ քարտուղարը Սէն-Բէթէրսպուրկ գացած է Կրէտէի կառավարչութեան և պատերազմական տուգանքին մնացորդ մասին խնդիրները կարգադրելու համար :

—Թանի Պոլսոյ թղթակիցը կիմացնէ թէ Հիւսիսէ եկած լուրերը մտահոգութիւն կը պատճառեն Բ. Իրան :

Մէքքէի քարանձինայի ենթարկուիլը աս հազին գրգռում պատճառած է ուխտաւորներուն մէջ և կը կարծուի թէ խռովութիւններ կրնան ծագիլ ատկէ :

Այդ խռովութիւններուն առաջը առնելու համար, թուրք կառավարութիւնը 20 հազար ոսկիէ աւելի գումար մը զրկած է Հիւսիսէ, բացառաբար ուխտաւորներուն բաժնուելու համար : Այդպէսով կը յուսացուի միտքերը հանդարտեցնել :

—Սուլթանը գերմանացի նկարիչ Պ. Ռօշօի ապսպրած է մեծ պատկեր մը որ պիտի ներկայացնէ անցած տարուան թրքո-յունական պատերազմին ամենէն գլխաւոր միջադէպերէն մէկը՝ Տօմարոսի ճակատամարտը՝ Գերմանիոյ կայսեր նուիրելու համար զայն :

—Պ. Կլատսթընի առողջական վիճակը աւելի ծանրացած է և տկարութիւնը կաւելնայ :

—Պոլսէն կը գրեն թէ ելլալով պալատին մէջ այժմէն մեծ պատրաստութիւններ կը տեսնուին Գերմանիոյ կայսեր փառաւորն զունելութիւն մը ընելու համար. ինչպէս կը յիշուի Վիլհէլմ Բ. առաջիկայ աշնան երուսաղէմ պիտի երթայ և վերադարձին պիտի հանդիպի Պոլիս :

Պէրլինէն յատկապէս գործաւորներ բերել տրուած են, կահաւորելու համար այն աքարթմանը ուր պիտի բնակի Սուլթանին Վեհափառ այցելուն :

—Նոյնպէս վերջի սուրհանդակաւ Պոլսէն առնուած լուրերու համաձայն անցեալ շաբաթ մեծ scandal մը պատահած է Բէրա Բալասի մէջ ուր իշխանած են խտրական ընտանիքէն երկու բռնիներ :

Մահմուտ ձէլալէտտին փաշա, որ պաշտօն ունի ժէօն-Թիւրքերը հալածել, այդ երկու բռնիներուն տուած այցելութեան մը միջոցին, սեղանին վրայ գտնուող թղթապանակ մը քոցուցած է կամացուկ մը :

Եգիպտացի իշխանները նշմարելով ձէլալէտտին փաշայի այդ քիթօքեթեան արարքը, ետ պահանջած են թղթապանակը: Բայց փաշան ընդդիմացած ըլլալով, բռնիներու և Մահմուտ ձէլալէտտին փաշայի միջեւ կռիւ մը ծագած է որու միջոցին եգիպտացի իշխաններէն մին ռէվօլվէրով յարձակած է իր հակառակորդին վրայ : Նոյն իսկ կըսուի թէ բռնի հարուածներ փոխանակուած են այդ քաղաքական—զաւեշտական կռուին միջոցին :

Այս դէպքը մեծ իրարանցում պատճառած է Բերայի մէջ :

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

ԺԲ.

Պ Բ Ա Պ Ի Տ Ո Ւ Հ Ի Ն

Քիչ մը աղջիկ, ի՞նչ մը կիւն եւ ի՞նչ մըն ալ երիկ մարդ :

Աւելի շիտակ կըրջար ըսել քե սեռ յունի :

Խարսեաշ գրագիտունի չէ տեսնուած Պոլսոյ մէջ. ամենքն ալ սեռ մագեր ունին եւ ընդհանրապէս Գուրգենի կամ Ասփանագի աշակերտներն են :

Առտուները ուշ կարթնան եւ մարդու չեն հաւնիր :

Ոսանաւորով կսկսին եւ վերջը չեն քերտ :

Կը կարծես քե գրագէտ ըլլալուն համար զգայնիկ եւ ջղոք բան մը ունին իրենց մէջ, միւնդեռ սովորական աղջիկներէն կամ կիներէն աւելի տախիկ կը գտնուին անոնց սիրտը եւ մանաւանդ կուրծքը :

Իրենց քաղի աղջկանց վարժարանին խնամակալունի են, եւ ճիշտ Գումգաբուցիներուն պէս կը հագուին :

Ծիւսմանի ամբողջ գոյները կամ իրենց ոսանաւորներուն մէջ կը դնեն եւ կամ շրջագգեսներուն վրայ :

Եկեղեցի չեն երթար կարծել տալու համար քե անասնուած են :

Սիրային խնդիրներուն մէջ անանկ չըդրճուիլ քանակ կընեն, որոնցմէ գրեթէ կարդալ չգիտող մը պիտի գարշէր :

Երեւային արարածներ ըլլալ կը կարծեն եւ ընդհանրապէս անքաններուն հետ կամուսնանան :

Ամենքն ալ մի եւ նոյն նիւթերու վրայ կը գրեն : Ամենքն աննշանէն սկսեալ մինչեւ ամենէն նշանակելիին միեւնոյն վերնագրի տակ ոսանաւորներ գրած են :

«Մայրական սէր—Մօտա Պուրնին—Աղքատ երիտասարդը—Արշալոյս—Զեփիւռ—Առ Գոհարիկ—Եթէ ըլլայի...—Առ լուսին—Վարդը—Առաքինի ձկնորսը—Վարդոյրիս ետեւէն—Սիրասուն քեռորդիս—Հայրիկիս տօնին առթիւ—Գութն—Բեկեալ Սէրը—Սրտիս յոյզերը...» եւ ուրիշ այս կարգի նիւթեր, որոնք հարիւր միոն հեռուէն տեսնուի կը հոսին :

Քիչ շատ ամեն քանի վրայ կը գրեն ի քաց տուեալ կնոջական նիւթերու վրայ :

Երկու Փոռմանոց գիրքեր կը հրատարակեն եւ ալ հետեւեալ խօսք ըլլալի :

Արձակ գրելու սկսածնուն պէս կը գիրնան :

Ձեռ գիտէր ինչո՞ւ համար խոշոր մեղքեր եւ մեծ ոսկեր կուտենան :

Շի՛ք երեւնալու համար այցելութիւն չեն ընէր, մօտայի գրիտարկ չեն հագնիր, պահի չեն քոներ եւ մարդու երես չեն նայիր, քայց երբ անգամ մը նային, . . . :

Միւնչեւ կարգուելին աղէկ, քայց յղի մնալուն պէս, մնալ քարով գրականութիւն, ոսանաւոր, տաղանդ, գիրք եւ յրագիր :

Պարսիգակցի սննդի պէս ծիծ տալ կսկսին, այնպիսի քաղթիւս կերպով, որ կերպնուս մէջ մըն ալ ոսանաւոր չի կարդալ նոյն իսկ երբ երիկ մարդէ մը գրուած ըլլայ :

ՌԱՍՄԵԼՍ

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ Ը

Ահաւասիկ սպանո-ամերիկեան պատերազմին վրայ շարաթ օրուրէն ի վեր ստացուած հեռագիրները :

Սպանիական նաւատորմի Սնդիոյ ծովագետներն վրայ ամերիկեան քառակայմ շոգենաւ մը գերած է :

—Սպանիական Կազեթըրաքիւրը պաշտօնապէս կը ծանուցանէ պատերազմին հրատարակուիլը :

—Քուպայի վրայ զրկուած նաւատորմի զին հրամանատարն է Սէմբըն ծովակալը :

—Թայլոզի Հոնկ-Քօնկէ ստացած մէկ հեռագրին նայելով, Մանիլեան կղզիներուն եւ զերքները պաշտպանուած են ելեր ընդծովեայ ականներով : Կը կարծուի թէ Սպանիացի իւրենց դիւրը կրնան պահել հոն :

—Միացեալ Նահանգներու նախագահը ազգու կերպով կը մերժէ Քուպան իրենց երկրին կցելու գաղափարը : Կըսէ թէ ինք ուրոշած է սնունդ հայթայթել Քուպայի սովատանջ ժողովրդին և զանոնք իրենց հասցնել ամերիկեան նաւատորմի զին պաշտպանութեամբ :

—Սմարթի թօրփիւնաւը սպանիական Մարիոս շոգենաւը հալածած ու գերած է :

—Հրամաններ տրուած են ամերիկեան նաւահանգիստները պաշտպանելու համար ընդծովեայ ականներ բանալ անոնց տակը, զգուշանալով սակայն բարեկամ պետութիւններու նաւերուն վնաս մը հասցնելէ :

—Պուէնալթէնթուրա շոգենաւին տէրերը բողբոսած են անոր ապօրինի գրաման դէմ, որովհետեւ Միացեալ Նահանգները պատերազմը չեն հռչակած տակաւին :

Սպանիա 30 օր պայմանաժամ տուած է ամերիկեան նաւերուն, իր նաւահանգիստներէն հեռանալու համար :

—Հաւանայի ամրոցները շաբաթ իրիկուն սկսած են կրակ ընել թշնամոյն վրայ և այսպէս 10 թնդանօթ արձակուած են առանց արգիւնքի : Ամերիկեան զրահաւորները չեն պատասխանած փոխադարձաբար :

—Իր նոր պատգամագրին մէջ Պ. Մաք Բինլէյ յարաբերութիւններու խզումը Սպանիոյ վերագրելով, պատերազմին հռչակուիլը խնդրած է Քօնկէէն, ինչ որ ընդունուած է :

—Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Պ. Շէրման հրաժարած ըլլալով իր տկարութեանը պատճառաւ, անոր տեղ ընտրուած է Պ. Տէյ :

—Հալանան պաշարող ամերիկեան նաւատորմիդին մէկ մասը հեռացած է՝ Մաթանզաւը, Մարիէլը և Քարտէնասը պաշարելու համար։ Սպանիական նաւատորմիդը գեռ Սէն-Վէնսան կը մնայ։

—Փրանսայի, Սնդիւիյ և Մէքսիկայի կառավարութիւնները յայտարարած են թէ ներկայ պատերազմի միջոցին իրենք չէզոք պիտի մնան։

ԱԶԳԱՅԻՆ

Ուրախութեամբ կիսմանք թէ Մարտ 8/20է ի վեր թանգարան ընթերցատուն մը հաստատուած է Աղեքսանդրիոյ մէջ։

Արդէն այդպիսի ազգային հաստատութեան մը պէտքը զգալի էր այդ քաղաքին մէջ և շնորհաւորելու է անոնք որ այդ սգոտակար դաշտափարը յղացած են, մասնաւորապէս Տիար Յ. Շնորհքեանը ուրուն նախաձեռնութեանը կը պարտին Աղեքսանդ. սանդրիայի թանգարանին հաստատութիւնը։

Ֆրանսերէն գրուած կանոնադրէն հետեւեալ յօդուածը կը թարգմանեն որ այդ հաստատութեան նպատակը կը սահմանէ։

Յօդ. Ա. «Հայկական քանգարանին նպատակն է կառելի եղածին չափ կատարել ժողովածոյ մը կազմել ամեն լեզուէ գրեթէ, հանդէսներու եւ լրագրներու՝ որոնք հայոց ազգին եւ հայրենիքին վերաբերող խնդիրներու վրայ կը նախեն։

«Թանգարանը ազգային անփոխանցելի սեպհա կանոնքիւն մը ըլլալու կոչուած է։

«Իր հաստատութեան անցողի նպատակն է քաղաքին ընթերցանութիւնը եւ ուսումնասիրութիւնը։ Խնամակալները պէտք է հսկեն այս սկզբունքին անքերի եւ անփոփոխելի պահպանման։

Թանգարանին այդ կանոնադրը թաղ. խորհրդոյ կողմէ վաւերացուած ըլլալով՝ երեք հոգիէ լինող մակալութիւն մը կազմուած է հետեւեալներէ. Տեարք Յ. Մուրաֆօֆ, Յ. Շնորհքեան և Յ. Պէրեպեան։

Կը լսենք նաեւ թէ թանգարանին կազմակերպութենէն ետքը այդ միւս նոյն երկրասարգները պիտի աշխատին տարան մըն ալ ունենալու։

Անշուշտ Աղեքսանդրիոյ հայերը չալտի զաւանս իրենց օժանդակութիւնը՝ այդ ազգասէր երիտասարդներուն ծրագիրը իրականացնելու համար։

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

ԵՒ

ԳԱՀԻՐԷԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Գահիրէի երեսփոխանական ժողովի առաջնորդական վերջի ընտրութեան վրայ արտասահմանի լրագիրներուն մէջ հանուեալ խորհրդածութիւնները կը գտնենք։

Փառնալի մէջ կը կարգանք որ Եգիպտոսի թեմի Հայերի Ընդհանուր Ժողովը գումարուելով, իրենց առաջնորդ ընտրեք են նախորդ Պատրիարք Ամեն. Իգմիլիեան Սրբազանը որ այժմ՝ Երուսաղէմ կը գտնուի։

Եգիպտոսեան Հայ գաղթականութիւնն իւր այդ ընտրութեամբ ցոյց տուած է թէ զիտէ արժանիք գնահատել. հետեւեալս ամենքն ալ գոհ և ուրախ ըլլած կը լինին։ Բայց ինչ որ զարմանալի է, սա է թէ իր այդ ընտրութիւն կանխառ զատապարտած է Բ. Դուռնէն վաւերացուելու մասին տարախուսելի դարձանքը, ըստ որում՝ Արթ. Յովսէփ Թ. Վ. Այվազեանն ալ երկրորդ ընտրելի որոշել է, որ եթէ Բ. Դուռը չուզէ վաւերացուել Ամեն. Իգմիլիեանի ընտրութիւնը, Այվազեան վարդապետը առաջնորդ լինի. իսկ եթէ Արթ. Այվազեանն ալ չվաւերացուի Դուռնէն կամ ինք չուզէ կամ չկրնայ երթալ Եգիպտոս (արդէն Արթ. Այվազեանն ուրիշ տեղի վրայ ընտրուած և հոն զրկուելու հրամանագիրն ալ առաւարտ է Բ. Դուռնէն), այն ատեն ինչ պիտի առնեն, պէտք էր ուրեմն հիմակուրէն երրորդ ընտրելի մ'ալ անոր տեղ զրուելու համար նշանակել։

Թերեւս Բ. Դուռը ցոյց տալու համար թէ ինք Իգմիլիեան Սրբազանի անձին գէմ թշնամութիւն չունի և յարգելու համար Հայ Ժողովրդի զգացումները — որոնք գգուելու ձեւեր կան — երբեմն վերջերս —, կը վաւերացունէ Իգմիլիեանի առաջնորդութիւնը, ինչպէս վաւերացուց անոր պատրիարքութիւնը, թէ եւ առաջ մերժած էր անոր նոյն իսկ Կրօնական Ժողովի անդամակցութիւնը. ինչ հարկ կար ուրեմն առաջուց կտակածելի ցոյց տալու անոր ընտրութեան վաւերացումը. կամ պէտք էր բնաւ չընտրել, կամ ընտրելէ յետոյ անոր վաւերացում տարակուսի չենթարկել։

Չարմանալի է մանաւանդ որ այդ ժողովի մէջ քաղաքագէտ մարդեր կը գտնուին եղբր և քաղաքագիտութիւն սխալ այնպիսի քայլ մ'առած են։

Կը մնայ հիմա տեսնել թէ այսու ամենայնիւ Բ. Դուռը գոնէ այնչափ փափկանկատ քաղաքագիտութիւն մը պիտի կրնայ ցոյց տալ, չհակառակելով Իգմիլիեանի ընտրութեան վաւերացմանը, որով ապացոյց մը տուած պիտի լինի թէ ինք չուզեր ընդհանրապէս ամեն կէտերի մէջ ալ Հայ Ժողովրդի զգացումներին և փափաքներին հակառակել։

(Արմենիա)

Անցեալ ԲԵՊ. Եգիպտոսի ազգայնոց սահմանադրական գաւառային ժողովը գումարեցաւ Գահիրէի առաջնորդարանին մէջ, նախագահութեամբ Տեղապահ Աշոտ Թ. Վ. և անդամակցութեամբ Տիգրան վաչայի, և առաջնորդի ընտրութեան ձեռնարկուելով, առաջին ընտրութենէ մը ետքն, նախ ընտրուեցաւ Տ. Յովսէփ Թ. Վ. Այվազեան, թէ եւ առաջնորդներ Ե. Ղան որ նա Ռոտտուպի առաջնորդ ընտրուած է արդէն։ Ընտրուելը կարծես թէ Յովսէփ Թ. Վ. Եգիպտոսի Վիճակը նախաձեռնար պիտի սեպէ։ Թերեւս այնպէս ըլլար, եթէ ինք արդէն վերջնապէս ընդունած չըլլար Ռոտտուպիներուն հրաւերը։ Գիտենք թէ Աշոտ Թ. Վ. հոգի կուտար Եգիպտոսի առաջնորդութեան համար։ Տեսնենք կատարելի երրորդ ընտրութիւնն իրեն նպատակաւ պիտի ըլլայ։

(Բիւզանդիոն)

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

... Խմբագիր Փառնա լրագրի,

Վերջին շարաթ օրուան ձեր թերթին մէջ կարգ մը անձնութիւններով լի նամակ մը տեսնուած է Ա. Տ. առօրագրութեամբ։

Գալտեան վարժարանի հոգաբարձութիւնը, նկատելով որ սխալներով այդչափ լեցուն գրուած մը բարեկամական զգացմանց արդիւնք մը չէր կրնար ըլլալ, չէ ուզած անոր պատասխանել։

Գալտը նամակին վերջի մասին մէջ, վարժարանի տնօրէնին վերագրուած պատասխանին, որ հետապնդուէն անհիմն է և անուշիկ, կը փութանք ուժգնապէս հերքել այդ սուտ ընծայութիւնը։ Եւ հարկ կը համարենք հոս յայտարարել թէ, ամեն անգամ որ խնդիր մը պարտականութեանց, մեր իրաւասութեանց և մեր իրաւունց սահմանին մէջ եւ գտն է, ճշմարտութիւնը ի ըջո հանելու համար հարկ եղած անկեղծութիւնը և քաջութիւնը ունեցած ենք միշտ։

Կը զարմանանք ու կը յաւիտէ նախկազդին տողագրութեան լինելը առնելու մասին այդչափ տարաբախտ ըլլալուն վրայ, և մեր բազմութիւնը զատելուն մէջ, ճշմարտութիւնը փնտրելու լուսագոյն միջոցներուն վրայ մասնաւոր դասեր ալ տալու աշխատութեան առջեւ չընկրկելով, չերազմելով կը յանձնարարենք թէ իրեն և թէ խնդրոյ առարկայ եղող աշակերտութեան հարցը որ համին այցելութեամբ մը պատուել զմեզ՝ չիմիջ լուսատարութեան փոխանակութիւն մ'ունենալու համար։

Կը խնդրեմ, Տիգր խմբագրի, որ բարեհաճէք ներկայս հիւրընկալել ձեր թերթին մէկ անկիւնը ի մեր ճշմարտութեան և ի չինութիւն գայթակղեալ մասոյ։

Յ. Սեթեւան

Տիգրին Գալտեան երկուս վարժարանի Գահիրէ, 15 ապրիլ 98

ՃԱՇԱՐԱՆ “ԼՈՒՍԻՆ”

Քրիտիկ Լիոնէի բովանդակութիւնը Արեւ ճաշարանի ճիշտ գէտը նոր բացումն այս հայկական ճաշարանին մէջ յաճախորդները պիտի գտնեն ընտրի սնունդ, կերակուրներու պէտքերուն, ինչ նախաձեռնութիւն, փութկոտ սպասարկութիւն և զիւրաւանդելի գիներ։

Ի մօտոյ նոր ճիւղ մըն ալ պիտի աւելցուի գաւառներ և Քեպապի

1—8

ՏԵՂԱԿԱՆ

Բարձր. Խալիլը Գուրպան Պայրամի առաջին ընդունելութիւնն պիտի կատարէ այս կիրակի օր Ապրիլի պալատին մէջ։

—Ն. Բարձրութիւնը Մեծի թանգարանի երկրորդ կարգի պատուանշանը շնորհած է Կարմիր Ծովու եղերքին կառավարիչ և Քառալայի դիւնուորական հրամանատար Բիւրնա վաչայի։

—Խալիլական իրատէ մը գաղթեցուցած է բռնիս Ալի պէյ, Պաղարի յատկացուած թռչակը, և զայն բաժնած է խալիլական ընտանիքէն ուրիշ երեք անդամներու մէջ։

—Ինքիւրը կազմէր տուած տեղեկութեանց նայելով անգլ. բանակէն չառ մը հետեւակազոր գումարտակներ և երեք թնդաւն յօթածիդ խումբեր հրաման տուած են պատուաւ կենալ, Եգիպտոսի ծառայութեան միտնելու համար, Սուտանի պատերազմական գործողութիւնները նորէն սկսելուն պէս։

—Գուրպան Պայրամի առաջին կառավարական բոլոր պաշտօնատուները գոյ պիտի մնան ապրիլ 30էն մինչեւ մայիս 4։

—Տեղական թերթերու նայելով մինչեւ հիմա Սուտանի պատերազմին համար մէկ միլիոն 750,000 սակիի գումար մը ծախսուած է։

—Ճիւտէի մէջ ութ օրէ ի վեր մանաւանդ և ոչ մէկ դէպք պատահած ըլլալով կը կարծուի թէ այդ հիւանդութիւնը բոլորովին անհետացած է։

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ՎԵՐԻՆ ԵԳԻՊՏՈՍ

(Շար. նախորդ քիւն)

Որովհետեւ տաճարին պատերուն վրայ տեղ տեղ Սէթի Ա.ի գեղեցկապէս քանդակուած պատկերը կայ, կը կարծուի թէ 1366 ին (Ն. Ք) տաճարին վրայ նորոգումներ և յաւելումներ տեղի ունեցած են այդ միապետին ձեռքով։ Իր որդին Ռամեսս Բ. այդ նորոգումներէն երեսուն երեք տարի վերջը շինած է նախադրան աշտարակաձեւ պատերը՝ որոնց երկու կողմը կանգնած է միակողման սեւ կրանիքէ մէկ մէկ կողմով։ Այս կողմերէն մէկը նախորդ Պոնապարթ Բարիլ փոխադրել տուած է, զարդարելու համար Փրանսայի մայրաքաղաքին “Բոնապարթ” հրապարակը։

Ռամեսս Բ.ի այս կողմերը թէ եւ մեծութեան մասին չեն կրնար հաւասարիլ Հաթսու. թագուհւոյն շինել տուած կողմերուն, սակայն գեղեցկութեան մասին աննշան են և զաղալիք մինչեւ ստորոտը ծածկուած բեւեռագրերով ու խորհրդանշաններով։

Տաճարին մեծ սրահը 200 քառակուսի սրահ է։ Լուսատուր, պարհիկ, յետակողմի գաւթներէն մէկը եկեղեցիի վերածուած է քրիստոնէութեան նախնի դարերուն մէջ և տակաւին կը մնան, մեծ մասով աւերուած վիճակի մէջ, խորանը և քանի մը սուրբերու իւզաներկ պատկերներ։

Եթէ կամ Եթէ տալի առաջ տաճարը՝ բայի նախադրան պատերուն աշտարակէն ամբողջովին ծածկուած էր աւերակներու կոյտով, և վրան հասարակաց չէնքեր կառուցուած էին։ Բայց պեղումները սկսած օրէն, չէնքերն ու հողակայաններ վերացուցան և տաճարը, յարութիւն առած իր թաղման վայրէն, կրնայ հարաւորութեամբ պարծիլ իր անցեալ փառքին ու գեղեցկութեան վրայ։ Իր նախադրութիւն մէկ մասը տակաւին ծածկուած

է աւերակներով և վրան մզկիթ մը ու վարժարան մը շինուած են : Կառավարութիւնը հիմա միջոցներ կը խորհի այդ շէնքերը վեր-ցընելու ու պեղումները շարունակելու հա-մար :

Լուքսորի և Գարնաքի տաճարները միա-ցած էին պողոտայով մը որ 6500 ոտք եր-կայնութիւն և 80 ոտք լայնութիւն ունէր : Այս փողոցին երկու կողմերը իրարմէ քանի մը կանգուն հեռաւորութեամբ, շարուած էին սփինքներ որոնք անշուշտ աւելի չքեղ փայլ մը կուտային քաղաքին այդ մասին :

Կը կարծուի թէ հանգիստաւոր օրերու մէջ Փարաւոնը, իր ետեւն ունենալով քուր-մերու և ժողովրդեան հոծ բազմութիւն մը, թափօրին առջեւէն կերթար մէկ տաճարէն միւսը այս սփինքներու փողոցէն՝ զոհեր և օրհնութիւններ մատուցանելու իրեն յաղթու-թիւն և յաշնոթիւն պարգեւող չաստուած-ներուն : Այդ սփինքներու մնացորդները տա-կաւին կը մնան հոս հոն ցիր ու ցան, ոմանք գետին տապալած, ոմանք մէջտեղէն երկուքի բաժնուած, ոմանց գլուխը կոտրած, ոմանց քիթը, ոմանց ոտքերը կ'են :

Յաջորդ օրը նախաճաշէն վերջ անցանք գետին միւս կողմը, քաղաքին արեւմտեան տաճարները այցելելու : Ամենէն առաջ պուր-տեցանք Գուրնէի տաճարը, որուն առաջին ձեռնարկուն եղած է Սէթի Ա. և նուիրած է զայն իւր հօր Ռամէս Ա. յիշատակին : Սէթի Ա. մահուանէ վերջ իր որդին Ռամէս Բ. շարունակած է տաճարին շինութիւնը, և ա-ւարտելով նուիրած է զայն իր հօր Սէթի Ա. յիշատակին : Տաճարին նախադրան առջեւ կը նշմարուին սփինքներու փողոցի մը մնացորդ-ները : Այս մեհեանը աւելի աւերակ վիճակի մէջ է քան Գարնաքի և Լուքսորի տաճարնե-րը : Մեծութեան մասին թէեւ չկրնար բազ-դատուիլ այդ երկու հոյակապ տաճարներուն հետ, սակայն իր վրայ եղած քանդակներն ու արձանագրութիւնները շատ հետաքրքրական են : Այս տաճարէն քանի մը հարկւր կան-գուն հեռու, Ռամէս Բ. շինած է նաեւ ու-րիշ տաճար մը որ կը կոչուի Ռամէսի հիմ, և նուիրած է զայն Ամէն-Ռաի (արեւ-աստուած) յիշատակին : Այս տաճարին նախադրան առ-ջեւ կը կենայ Ռամէս Բ. Վիթիարի արձա-նը միակտուր կարմիր կրանիթէ շինուած : Այս արձանին կամ կօլօսիօնին բարձրութիւնն է 69 ոտք, ոտքին երկայնութիւնը 10 1/2 ոտք, ոտքերէն մինչեւ ծունկը 20 ոտք, միջամատը 4 1/2 ոտք, բազուկը 15 1/2 ոտք, ուսերու լայնութիւնը 20 ոտք, ամբողջ արձանին ծան-րութիւնը կը հաշուի 1175 թօն :

«Ռամէսի հիմ» մեր ճամբան շարունակե-ցինք դէպի Պապէլ Մօլուքի ձորը ուր կան Փարաւոններու 25 ստորերկրեայ քարափոր գերեզմանները : Ասոնք կը պատկանին ԺԹԻԳ և Իրդ իշխանութեանց : Սգրաբօն հին Հռով-մայեցի պատմիչը, որ այցելած է Թէֆնիսը Գրիստոսէ 25 տարի առաջ, կը պատմէ թէ այդ քարափոր գերեզմաններու թիւը 40 էր որոնց 17ը բացուած էին Պողոմէոս Լակոսի ժամանակ : Ասիկայ ցոյց կուտայ թէ մնաց-եալ 16 գերեզմանները տակաւին գտնուած չեն :

(Շարունակելի)

Տօք. Ա. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Ա. Զ. Դ

Ճարտարապետ Պողոս Խտրեան, վրայեալ Պոլ-սոյ գեղարուեստական վարժարանէն, ճարտարապե-տական գրասենեակ մը բացած է Մուսրի փողոց, ժամագործ Քրամէր ընկ. ղէմի շէնքին երկրորդ յար-կը : Կը ստանձնէ շինութեանց ու նորոգութեանց վերաբերեալ ամէն տեսակ ճարտարապետական յանձ-նարարութիւններ : Նաեւ փափաքողներուն գծա-գրութեան և ճարտարապետութեան մասնաւոր դա-սեր կ'աւանդէ :

Գրասենեակը բաց է ամէն օր առաւօտեան ժամը 8էն 12 և 2էն 7 (յ.մ.) 3—10

Դ Ի Մ Ե Ց Ե Ք

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ
ԳԱՀԻՐԷ Մուսրի փողոց ԳԱՀԻՐԷ

Եթէ կուզէք ոսկի ժամացոյցներ արանց կանանց 120 դր. և մինչեւ 2500 դր.

Եթէ կուզէք արծաթ ժամացոյցներ 50 դր. և մինչեւ 200 դր.

Եթէ կուզէք նիբէլ ժամացոյցներ 10 դր. և մինչեւ 100 դր.

Եթէ կուզէք պատի և բօնաօլի բաղմաղան ռանտիւններ գաղղիական եւ ամերիկեան

Եթէ կուզէք նորաձեւ շղթաներ ոսկի, արծաթ եւ ոսկեպաւս

Եթէ կուզէք այլ և այլ գոհարեղէնք աղամանդեայ, ոսկի, արծաթ, ոսկեպաւս

Դ Ի Մ Ե Ց Ե Ք

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ
ՄՈՒՍԲԻ ՓՈՂՈՑ ԳԱՀԻՐԷ 6—20

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՈՍՏԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԻԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախող-ները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործա-րաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիններով : Դեղագիրները ամենայն խնամօք և ուշադրու-թեամբ կը պատրաստուին :

Անգլիական և Ֆրանսական սքեսիալիքներ : Թաւմ հանգալին ջուրեր, անուշամոքիքիւնք եւն. բնաւորական և մանրադիտական քննութիւնք : Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծա-նօթ թիւիչներ :

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց համար : 44—50

ՆՈՐ ՓՈՒՌ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՏԱՐՊԷԼ ԿԻՆԷՆԱ ՓՈՂՈՑ

Ա. Զ. Դ

Ստորագրեալքս պատիւ ունինք ծանուցանելու արդոյ հասարակութեան թէ ամսոյս 1էն սկսեալ գնած ենք Տարպէլ-Կինէնայի Հայկական փուռը և թէ մենք պիտի շարունակենք այսուհետեւ անոր գործառնութիւնները : Այդ փուռին գործելու եղա-նակին մէջ խնամատ բարեկարգութիւններ ներմու-ծած ըլլալով՝ կարող պիտի ըլլանք եւրոպական ունէ-փուռի մը պէս լիովին գոհացնել իրենց վստահու-թեամբ զմեզ պատուող յաճախորդները :

Կը սիրենք յուսով որ պատուական ազգայինք զմեզ պիտի բաջաբերեն մեր այս ձեռնարկին մէջ :

Ս. Զուրիկեան եւ Նիքարժ Հացագործեան 10—15

Ա. Զ. Դ

Պ. Յակոբի կազմակերպած դաւանակի վիճակա-հանութիւնը տեղի պիտի ունենայ առաջիկայ մայիս 8ին, կիրակի օրը : 2—4

ՍԱՓՐԻԶ

ՕՇԱՆՆԷՍ ՊԵՅԼԷՐԵԱՆ

Բերայի ճարտար սափրիչներէն Օհանէս Պէյլէրեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գա-հիրէ հաստատուած է և մեծապէս գոհ թու-ղուցած իր յաճախորդները, այս անգամ իր նոր խանութին մէջ (Աթապա էլ Խաորա, թրամուէյի կայարանին դէմ) ամեն դիւրու-թիւն ու հանգստաւետութիւն կրնայէ մաք-րութիւն, արագութիւն ու վայելչութիւն՝ թէ ածիման և թէ վարսայարդարութեան մասին :

ՅՈԹՕԿՐԱՅԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄՄԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարեւագործու-թեան համեմատ հաստատուած այս լուսանը-կարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիններով :

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆԵՐԻ

6—10

Տ Պ Ա Ր Ա Ն

“ՓԱՐՈՍ, ԼՐԱԳՐԻ

ԿԸ Տ Պ Ա Գ Ր ՈՒՒՆ

ԱՄԵՆ ԼԵՁՈՒԷ ՇՐԱՊԱՐԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱՋԻ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱԲԱՐՏ

ՅԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԽ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք և փութապ կը կատարուին :

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցեֆաւսերու եւ տնտեսու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերէ, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7 :

ԼՈՒԱՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԻ, ՀՐԱՆՏ ԱՋԱՏԵԱՆԻ ՆԱԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

Կը ԼՈՒԱՑ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց շապիկներ, շրջագոհասներ, ևն. մաքրութիւն, ճշգրտահաշութիւն, և խիստ չափաւոր գին : 14—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի